568 Եկե՛ք աղոթենք ծնկների վրա,

1. Եկե՛ք աղոթենք ծնկների վրա,
Տիրոջ հետքերով սուրբ լեռը ելնենք,
Եկե՛ք նորոգենք սեղանը զոհի,
Խնկաբույր կյանքն է Աստծուն հաճելի:
Ծնկների վրա երկինքն է բացվում,
Անձրև է տեղում, օրհնություն իջնում,
Ծնկների վրա հավատքն է ծաղկում,
Լեռները փլվում, ծովերը՝ ճեղքվում:

2. Եկե՛ք աղոթենք ծնկների վրա,
Բացենք լուսամուտ դեպ Երուսաղեմ,
Թշնամու դավն է՝ աղոթք խափանել,
Դանիելներ են պետք, որ արթուն կանգնեն:
Ծնկների վրա, երբ մարդն է լռում,
Աստված է խոսում, Հոգին է իջնում,
Ծնկների վրա Տերն է հայտնվում,
Կանչում է, սրբում, օրհնում, նորոգում:

3. Եկե՛ք աղոթենք ծնկների վրա.
Սուրբերի պարտքն է՝ Հոգով աղոթել:
Միաբանության գաղտնիքն է միայն
Աղբյուրը սիրո, ջերմ եղբայրության:
Ծնկների վրա սերն է բողբոջում,
Սրտեր միանում, վերքերը բուժվում,
Ծնկների վրա հպարտն է զղջում,
Եղբորը ներում, ոտքեր լվանում:

4. Եկե՛ք աղոթենք ծնկների վրա,
Տիրոջ բանակն է այդպես զորանում,
Աստծո Խոսքն է մեզ միշտ զորացնում,
Թշնամու բերդը աղոթքն է քանդում:
Ծնկների վրա աղոթենք Հոգով.
Փլվում են, քանդվում բերդեր աղոթքով,
Ծնկների վրա չարն է պարտվում,
Հավատքն է հաղթում՝ Տիրոջ անունով:

5. Եկե՛ք աղոթենք ծնկների վրա.
Պատգամն է Տիրոջ վերջին օրերում,
Տիրոջ աչքերը ուզում են տեսնել
Աստծո մարդկանց՝ ծնկների վրա:
Ծնկների վրա երգենք ու գովենք,
Ծնկների վրա Հոգով աղոթենք,
Ծնկների վրա Սուրբ Հոգով լցվենք
Եվ ապրենք մի նոր սուրբ Պենտեկոստե: